ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն ՝ Հայոց լեզու, գրականություն

Թեմա ՝ **«Առակս ինչ կցուցանե» թեմայի ուսուցումը 5-րդ դասարանում**

Կատարող ՝ Ստեփանյան Քրիստինե Մայիսի

Ղեկավար ՝ Գալստյան Աշոտ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Երևան-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 3

Գլուխ 1.Առակի ուսուցման առանձնահատկությունները ---------- 4

Գլուխ 2. «Առակս ինչ կցուցանե» թեմայի ուսուցումը 5-րդ դասարանում------ 6

Եզրակացություն ---------- 12

Գրականության ցանկ ---------- 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցն իր պատմության ողջ ընթացքում եղել և մնում է հասարակության կողմից գնահատվող արժեքներից բարձրագույնը։

Դպրոցի արդի հրամայականն են դարձել նորովի մոտեցումները կրթական գործընթացին և ուսուցչի՝ իր դերի արժևորումը։ Յուրաքանչյուր դաս պլանավորելիս ուսուցիչը իր առջև դնում է խնդիրներ՝ ինչ սովորեցնել, ինչպես սովորեցնել և ինչու սովորեցնել։ Այսօրվա ուսուցիչը պետք է լինի անընդհատ սովորելու անհրաժեշտությունը գիտակցող, ժամանակակակից մեթոդների իմացությամբ զինված, ճկուն, կազմակերպչական հմտություններով օժտված, համբերատար, ստեղծարար, աշակերտների ճանաչողական զարգացումը խթանող։

Մայրենիի յուրաքանչյուր դաս կազմակերպում ենք տրված նյութի հաղորդման և մատուցման գործընթացը կատարելագործելով։ Յուրաքանչյուր դաս սկսելուց առաջ ուսուցիչն իր առջև դնում է նպատակ, գծանշում դրան հասնելու ուղիներն ու հստակեցնում խնդիրները։ Դասապրոցեսին ուսուցիչը հաղորդող-վերահսկող չէ սոսկ, այլ ուղղորդող-աջակցող։ Համամիտ չեմ, երբ ասում են՝ որ ուշադիր լսեր, կհասկանար, ուսուցիչը հաճախ իր մատուցած նյութի ծավալը չի տրոհում մասերի, մինչդեռ սովորողներն ավելի հեշտ են ընկալում, եթե մատուցելը կատարվում է փոքր ծավալով, ուղեկցվում հարցերով, սովորողները մասնակից են դառնում խթանման փուլից մինչև գնահատում, սովորում ոչ միայն ուսուցչից, այլև միմյանցից։

Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ։ Ուսուցչի խոսքը պետք է ուղեկցվի պատկերներով։ Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են (տե՛ս **Ուսուցման արդյունավետ հնարներ** / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020, էջ 28)։

Աշխատանքն ունի հետևյալ կառուցվածքը.

1. Գլուխ 1։ Առակի ուսուցման առանձնահատկությունները
2. Գլուխ 2. «Առակս ինչ կցուցանե» թեմայի ուսուցումը 5-րդ դասարանում
3. Եզրակացություն։

Մեր ցանկությունն է, որ ուսուցումն ու ուսումնառությունը դառնան ավելի հետաքրքիր ու հաճելի։

Այս աշխատանքը կարող է օգտակար լինել հանրակրթական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին, մանկավարժական բուհերի ուսանողներին և կրթության գործի կազմակերպիչներին։

ԳԼՈՒԽ 1

Առակի ուսուցման առանձնահատկությունները

Առակի ուսուցումն իր առանձնահատուկ տեղն ունի մայրենիի դասընթացում: Առակներ սկսում ենք ուսումնասիրել տարրական օղակից՝ կրտսեր դպրոցից: Առակի դաստիարակչական լայն հնարավորությունները օգտագործելով՝ սովորողների մեջ դաստիարակում ենք հայրենասիրություն, ճշտապահություն, արդարամտություն, աշխատասիրություն, օգնում հասկանալ առակի բարոյախոսությունը: Նպատակահարմար չէ դասն սկսելիս ձևակերպել առակի բարոյախոսությունը, սովորողներն իրենք պետք է վեր հանեն ու սահմանեն բարոյախոսությունը: Մեր հիմնական խնդիրն է առակի հումորն ու այլաբանական միտքը սովորողի գիտակցությանը հասցնելը : Ղազարոս Աղայանը առակները համարել է ոչ միայն հայեցի դաստիարակության, այլ երեխայի լեզվի և ազգային մտածողության կերտման միջոց (Թ. Թովմասյան, «Մայրենի 5» մեթոդական ուղեցույց, էջ 138) :

Այժմ ձևակերպենք առակի ուսուցման առանձնահատկություններից մի քանիսը: Աշակերտները առակի ժանրին ծանոթ են 3-րդ դասարանից և գիտեն,թե ինչպես է մի օր առակը ծնունդ առել (տե՛ս Վ. Ա. Սարգսյան և ուրիշներ, «Մայրենի 3» , էջ 56): Այդ իսկ պատճառով նախ պետք է պարզել նախագիտելիքները, ապա ավելացնել, որ առակը, ի տարբերություն հեքիաթի, ծավալով ավելի փոքր է: Այն իրական կյանքը ներկայացնում է այլաբանորեն, ունի խրատական բովանդակություն: Առակի հերոսներ կարող են լինել կենդանիները, բույսերը, բնության երևույթները, թռչունները: Սովորողները , վերհիշելով իրենց ծանոթ առակները, կներկայացնեն բովանդակությունը, բայց ոչ բարոյախոսությունը: Այստեղ արդեն ուսուցիչը պետք է միջամտի և հիշեցնի, որ առակի բաղկացուցիչ մասերը երկուսն են՝ դեպքերի նկարագրություն և խրատական մաս՝ բարոյախոսություն: Բարոյախոսությունը սեղմ եզրակացության հատվածն է, որը անցյալում սկսվում էր «Առակս ցուցանե» արտահայտությամբ, որը նշանակում է «Այս առակը ցույց է տալիս…»: Ստացվում է՝ մեկնաբանում ենք թեմայի գլխագիրը: Ցանկալի է մուտքի դասին անդրադարձ անել ծանոթ որևէ առակի: Օրինակ՝ Ռ . Հայրապետյանի «Շախմատ » չափածո առակը (տե՛ս Վ. Ա. Սարգսյան և ուրիշներ, «Մայրենի 4» , էջ 100), հստակ ձևակերպված է բարոյախոսությունը.

… Իսկ որտեղ որ կա սեր ու միություն,
Այնտեղ չի լինի երբեք պարտություն:

Հաջորդ առանձնահատկությունը առակի միջոցով սովորողների վատ սովորությունները, բնավորության վատ գծերը, թերությունները վերացնելն է, աշխարհաճանաչողական գիտելիքները ընդլայնելը: Դասագրքում ընդգրկված առակները պարզ ու մատչելի գրելառճով սիրվում են սովորողների կողմից, խթանում կարդալու որակական հատկանիշները, նպաստում զարգացնելու նաև սովորողի ընթերցասիրությունը:Առակի ուսումնասիրության ընթացքում սովորողների ուշադրությանն են ներկայացվում աստվածաշնչյան առակներ, որոնք նույնպես դաստիարակչական մեծ դեր ու արժեք ունեն սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում զարգանում են սովորողի հասկանալով կարդալու, կարծիք հայտնելու, համաձայնելու կամ հակադրվելու, փաստարկներ բերելու, հիմնավորելու կարողությունները: Առակը անձնավորության ինքնարտահայտման, մտքերի ձևավորման միջոց է:

Այսպիսով՝ առակի միջոցով առաջնորդում, ուղղորդում և դաստիարակում ենք նոր սերունդ՝ չմոռանալով, որ մայրենիի դասագիրքը միասնացված (ինտեգրված) կառուցվածք ունի, հետևաբար տեքստային աշխատանքին զուգահեռ պետք է կատարել նաև լեզվական առաջադրանքները:

ԳԼՈՒԽ 2

«Առակս ինչ կցուցանե» թեմայի ուսուցումը 5-րդ դասարանում

«Առակս ինչ կցուցանե» թեմայի ուսուցմանը հատկացված է մոտ 50 դասաժամ (յոթ շաբաթ): Յուրաքանչյուր թեմա դասագրքում ունի հստակ ձևակերպված նպատակ, իսկ թեմայի ավարտին շարադրված են վերջնարդյունքները։

Թեմայի ուսուցման նպատակներն են՝

● ձևավորել հասկանալով ընթերցելու, առակի ժանրին բնորոշ առանձնակատկությունները ընկալելու, առակը վերլուծելու կարողություններ,
● ձևավորել սեփական դիրքորոշում, դասեր քաղել կարդացածից,
●հարստացնել բառապաշարը,
● զարգացնել լեզվաքերականական նյութերը կապակցված խոսքի մեջ կիրառելու կարողություն։

Թեմայի ուսուցման վերջնարդյունքներն են՝

● կարողանալ արտահայտիչ և հասկանալով կարդալ առակի տեքստը,
● կարողանալ կազմել առակից սովորած բառերի բացատրական բառարան,
● կարողանալ մատնանշել առակի կառուցվածքը,
● կարողանալ առանձնացնել առակի գլխավոր միտքը,
● կարողանալ հորինել առակ՝ դրսևորելով սեփական դիրքորոշում,
● կարողանալ տարբերել հնչյունը տառից, վանկը բառից, զանազանել կազմությամբ պարզ, բարդ և ածանցավոր բառերը, հոդակապով և անհոդակապ բարդ բառերը,
● կարողանալ որոշել բառերում շեշտի տեղափոխության հետևանքով կատարված հնչյունափոխությունը,
●կարողանալ կազմել կապակցված խոսք՝ կիրառելով յուրացրած լեզվական նյութերը։

Թեմայի շրջանակում սովորողներն ուսումնասիրում են հետևյալ առակները.

1.Եզոպոս, «Եղջերուն և խաղողը»
2. Վարդան Այգեկցի, «Բարին ու չարը»
3. Հովհաննես Շիրազ, «Հավերժական վեճը»
4. «Հայրն ու որդին» ժողովրդական առակը
5. Իվան Կռիլով, «Որսորդ առյուծը»
6. «Տունը» հայկական ժողովրդական առակը
7. Ավետիք Իսահակյան, «Կաքավն ու աղվեսը»
8. Մխիթար Գոշ, «Ճնճղուկներն ու արագիլը»
9.«Երեք ծառաների առակը» (ըստ Մատթեոսի Ավետարանի)

Թեմայի ուսումնասիրության ընթացքում սովորողները կկատարեն ինչպես բառային և լեզվաքերականական, այնպես էլ գործնական աշխատանքներ, ուսուցիչը

կհամակարգի և կստուգի գիտելիքները թեմատիկ գրավոր աշխատանքների միջոցով:

Բոլոր արհեստավարժ մանկավարժները առաջ են քաշել սկզբունքներ, կիրառել համապիտանի սկզբունքներն իրենց նպատկին հասնելու համար: Ներդնելով աշխատանքային տարիների փորձը, պրպտումները՝ հայ և համաշխարհային ականավոր մանկավարժները մայրենի լեզուն բնորոշել են որպես անձի ինքնարտահայտման , մտքի ձևավորման և հաղորդման միջոց: Լեզվի ուսուցման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

▪ Շեշտադրություն անել ուսումնական նյութի ոչ թե քանակային, այլ կառուցվածքային և որակական կողմերի վրա:
▪ Ուսուցման կենտրոնացում կատարել սովորողների մտավոր, հոգեբանական և ֆիզիկական հնարավոր առավելագույն ությունների վրա
▪ Ուսուցման անհատականացում՝ աշակերտի ունակությունների և հնարավորությունների հաշվառում:
▪ Ուսուցման գործընթացի առավելագույն կենտրոնացում պատկերացման և գիտակցման վրա:
▪ Ուսուցման գործընթացի կառուցում՝ աշակերտի և ուսուցչի, բացի դրանից՝ աշակերտների ինտերակտիվ(փոխներգործուն) ուղղվածության հիման վրա:
▪ Լեզվի գործառույթային տարբեր կողմերի և ձևերի միասնականացված ուսուցում:
(Թ. Թովմասյան, «Մայրենի 5» մեթոդական ուղեցույց, էջ 152)

Այժմ ներկայացնենք « Տունը» հայկական ժողովրդական առակի ուսուցման օրինակելի նմուշ:

« Տունը» հայկական ժողովրդական առակ
(4 ժամ)

ԴԱՍ 1

Դասի թեման՝ «Տունը» առակը: Հնչյունափոխություն

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի նպատակը՝

● **Նպաստել** հասկանալու «Տունը» առակի իմաստը:

● **Նպաստել** հնչյունափոխության միջոցով բառի փոփոխությունները ճանաչելուն և **ձևավորել** անսխալ գրելու կարողություններ:

● **Զևավորել** աշխատանքային և սոցիալական հմտություններ:

Դասի վերջնարդյունքները՝

- **Կարդալ** և մեկնաբանել առակը:
- **Ամրապնդել** պատկերացումը առակում պատկերված հայրենիքի, հայրենի եզերքների, մարդկային ապրումի և հույզի, գեղեցիկի մասին:
- **Գնահատել** առակի բառապաշարը, հիմնավորել լեզվի պարզությունը:
- Բառերում **ճանաչել** շեշտի տեղափոխության հետևանքով կատարվող հնչյունափոխությունը:
- **Կազմել** կապակցված խոսք՝ կիրառելով յուրացրած լեզվաքերականական նյութը:

Ուսումնական մեթոդները՝ «Մտագրոհ» , «Ուղղորդված ընթերցանություն» , «3,2,1» :

Դասի ընթացքը՝

1. Ստուգվում են տնային հանձնարարությունները:

2. **Տուն** բառով մտագրոհ (գրատախտակի կենտրոնում գրվում է **տուն** բառը, ապա աշակերտները լրացնում են , թե ինչ է տունը) :



Տուն բառով կազմում են բառակապակցություններ և նախադասություններ։

3. Աշակերտները կարդում են տեքստը նախ լուռ, ապա 1-2 աշակերտ՝ բարձրաձայն։

4. Բացատրվում են կարմիր գրված բառերը, կազմվում է բառաշարք (մտամոլոր, գլխիկոր, գթասիրտ, սիրասուն, մարե, հրաշակերտ, անշուք, պզտիկ, նախշուն)։ Ուսուցիչը **մտամոլոր, գլխիկոր, գթասիրտ, սիրասուն** բառերի օգնությամբ բացատրում է հնչյունափոխությունը՝ նշելով, որ հնչյունափոխվում են ձայնավորներն ու երկհնչյունները, երբ նոր բառեր կազմելու կամ բառի ձևափոխության ընթացքում թուլանում է բառային շեշտը և տեղափոխվում նոր կազմած բառի վերջին վանկի ձայնավորի վրա։ Փորձում են կազմել բառեր **տուն** արմատից(տնակ, տնպահ, տնարար, տնամերձ, գինետուն, հացատուն), պարզել հնչյունափոխությունը։

5.Տրվում է հանձնարարություն ՝ խմբային աշխատանք.

Խումբ 1- Նորից կարդացե՛ք առակը, բովանդակությունը ներկայացրե՛ք 5-6 պարզ նախադասությամբ։

Խումբ 2- Կարմիր գրված բառերը գործածելով՝ վերարտադրե՛ք առակի բովանդակությունը։

Խումբ 3 – Տեքստը բաժանե՛ք երկու մասի, վերնագրե՛ք յուրաքանչյուր մասը։

Աշխատանքի կատարմանը տրվում է 10 րոպե ժամանակ։ Աշխատանքները ներկայացնելուց հետո փորձում են պատասխանել՝ ինչ խորհուրդ ունի հայրենի տունն այս առակում, վերհիշում են Հովհ. Թումանյանի «Ամենից լավ տունը» ստեղծագործությունը, համեմատում։

Դասն ամփոփվում է «3,2,1» մեթոդով։

3 բան , որ սովորեցի
2 բան, որ կուզեի քննարկել
1 բան ,որ չհասկացա

(Ամփոփումը կատարում ենք ինքնակպչուն թերթիկներով, քանի որ հաջորդ դասաժամը սկսելու ենք անդրադարձ անելով վերոնշյալին)

ԴԱՍ 2
Դասի թեման՝ «Տունը» առակի բովանդակությունը։ Է(ե) ձայնավորի հնչյունա փոխությունը
Դասի տևողությունը՝ 45 րոպե
Դասի նպատակը՝

● **Հասկանալի դարձնել** առակի բովանդակությունը:

● **Նպաստել** ընկալելու է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը:

Դասի վերջնարդյունքները՝

● Առակի բովանդակությունը **վերաշարադրել** չափածոյով՝ հավատարիմ մնալով հեղինակի բառապաշարին:

● **Հաղորդել** առակի բովանդակությունը ինչպես սեփական բառերով, այնպես էլ նոր սովորած բառային միավորների օգտագործմամբ:

● **Արտահայտել** կարծիք առակի գաղափարական բովանդակության վերաբերյալ:

● **Վերլուծել** առակը՝ ներկայացնելով հիմնական գաղափարը:

● **Ստեղծել** առակի բովանդակությանը համապատասխան շարադրանք կամ առակի որևէ դրվագին համապատասխան նկար:

● Տեքստում **գտնել** է(ե) ձայնավորի հնչյունափոխության կանոններին վերաբերող բառեր:

Դասի ընթացքը՝

1.Դասը սկսում ենք անդրադարձով.

3 բան , որ սովորեցի

2 բան, որ կուզեի քննարկել (քննարկվում են մի քանիսը, մնացածին անդրադառնալու ենք հաջորդ ժամերին)

1 բան ,որ չհասկացա (բացատրում են աշակերտները միմյանց, ուսուցիչը)

2.Վերհիշում ենք՝ ինչ է հնչյունափոխությունը, կատարում բառային աշխատանք (տե՛ս «Մայրենի 5» դասագիրքը, էջ 74, 1-5):

3.Կատարում ենք տեքստային աշխատանք (տե՛ս «Մայրենի 5» դասագիրքը, էջ 75, 5-7):

4.Ուսուցիչը բացատրում է է(ե) ձայնավորի հնչյունափոխության կանոնները, ապա աշակերտները կատարում են առաջադրանք 1-ը (էջ 77):

5.Դասի ավարտին աշակերտներից մի քանիսը ներկայացնում են՝ որն է առակի գաղափարը, արժևորում հայրենի տունը:

Այստեղ տեղին է նշել, որ յուրաքանչյուրն ունի իր տունը, իսկ մեր՝ բոլոր հայերիս տունը Հայաստանն է, այն պետք է սիրել, պաշտպանել ու հզորացնել:

6. Ամփոփում ենք դասը՝ լսելով կարծիքներ աշակերտներից, հանձնարարում տնային աշխատանք (գունավոր քարտերի վրա տրված առաջադրանքներից ընտրել մեկը և կատարել)։

Առակը դարձնել չափածո:	Նկարազարդել առակը:	Առակին նոր հերոս ավելացնել և շարադրել նորովի:

Դասի թեման՝ «Տունը» հայկական ժողովրդական առակի գաղափարը և այլաբանությունը: Է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը

Դասի տևողությունը՝ 90 րոպե

Դասի նպատակը՝

- **Զարգացնել** առակի գաղափարը և այլաբանությունը ինքնուրույն ձևակերպելու կարողություններ:
- **Նպաստել** ընկալելու է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը:

Դասի վերջնարդյունքները՝

- **Ներկայացնել** առակի գաղափարական բովանդակությունը սեփական ընկալմամբ:
- **Բնութագրել** առակի կերպարներին:
- **Բնութագրել** տղային առակի սկզբում և վերջում:
- **Գնահատել** տղայի արարքը:
- Գործող անձի գործունեությունը **կապել** սեփական կենսափորձի հետ և **հիշել** նման իրավիճակներ:
- Տեքստում **գտնել** է(ե) ձայնավորի հնչյունափոխության հետ կապված բառեր և **վերականգնել** անհնչյունափոխ ձևը:

Դասի ընթացքը՝

1.Աշակերտները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները (3-4 աշակերտ), իսկ ովքեր նկարազարդել են, ներկայացնում են, թե որ դրվագն են նկարազարդել: Ուսուցիչը աշակերտներից մեկին նշանակում է **դասի զեկուցող**:
2. Կատարում ենք տեքստային աշխատանք (տե՛ս «Մայրենի 5» դասագիրքը, էջ 75, 6-10): Աշակերտները հիշում են դեպքեր, երբ հեռու են եղել հայրենի տնից, ծնողներից, նշում ապրումներն ու խոսում կարոտի մասին:
3.Ուսուցանող գրավոր աշխատանք (բառային աշխատանք 7)

Աշակերտները կազմում են նախադասություններ, ապա փորձում իրար միացնել , ըստ անհրաժեշտության փոփոխություններ կատարել, վերադասավորել նախադասությունները և ստանալ տեքստ։ Ստացված տեքստը թելադրվում է ամբողջ դասարանին, ժամանակի առկայության դեպքում գտնում են հնչյունափոխության դեպքերը։

4. Դասն ամփոփում ենք ՝ լսելով **դասի զեկուցող**ին։

5.Կատարվում է գնահատում (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, գնահատում ուսուցչի կողմից)։

Եզրակացություն

Դասագիրքը և մեթոդական ձեռնարկը, առաջարկվող մեթոդները և գործունեության ձևերը ընդհանուր են, օրինակելի և կողմնորոշող, իսկ դասը յուրաքանչյուր դասարանում և յուրաքանչյուր դասաժամի յուրահատուկ է.ուսուցիչը և աշակերտները «գաղափարների շինարարներ» են, աշխատում են միասին, միմյանց օգնելով ու միմյանցից սովորելով։ «Առակս ինչ կցուցանե» թեման հնարավորություն է տալիս ուսուցչին նյութի բովանդակությունը հասցնել սովորողին, վերջինիս ներգրավել ուսուցման գործընթացում, գտնել հնարներ՝ աշակերտներին տանելու ինքնուրույն հետազոտողի և բացահայտողի, վերլուծողի, քննադատաբար մտածողի ճանապարհով, դաստիարակելու, ուղղորդելու նրանց։

Գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ
https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
2. Գալստյան Ա., Թովմասյան Թ., «Մայրենի 5» դասագիրք, Էդիտ Պրինտ,Երևան-2023
3. Թովմասյան Թ., «Մայրենի 5» մեթոդական ուղեցույց, Էդիտ Պրինտ,Երևան-2023
4.Սարգսյան Վ. և ուր., «Մայրենի 3» դասագիրք, Մանմար, Երևան- 2021
5. Սարգսյան Վ. և ուր., «Մայրենի 4» դասագիրք, Մանմար, Երևան- 2022
6.Խաչատրյան Ս., «Ուսուցման արդյունավետ հնարներ» , Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան - 2020
https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/dec9c28e7d204ef8b8351212f0194bc0.pdf
7. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա. «Մայրենի 5-6» Ուսուցչի ձեռնարկ, Երևան-2006
8. Ջանի Ռոդարի, «Ստեղծագործական երևակայության քերականություն», Էդիտ Պրինտ, Երևան-2011
9.Խարազյան Ռ., «Հայոց լեզու. դասավանդման մեթոդիկա», Երևան-2016
10. Ջրբաշյան Էդ., Գրականագիտական բառարան , Երևան- 1972